ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/21

ք. Երևան «10» 06 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և <<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ս. Չունգուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 75767940 (յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից 15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար համաձայն N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Գ. Քոչարի 21
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 22025012187200 0
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 01505177
Գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Ս. Մուրադյան	_____ Ս. Զունգուրյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«10» 06 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	22111110-21	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 1-ին մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը 2»՝ 1-ին մաս, 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Ով եմ ես», «Ես և իմ ընտանիքը», «Ես և դպրոցը», «Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը», «Իմ քաղաքը, իմ գյուղը» և «Բնությունն իմ շուրջ» (կենդանի և անկենդան բնություն, բույսեր) թեմաները: Թեմաները պետք է միտված լինեն. աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորելու գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի, ընդլայնել երեխայի պատկերացումները շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ, իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները ուսումնասիրելու շնորհիվ ծանոթանալ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորել օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք բերել հաղորդակցական հմտություններ: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողություններ և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի չափորոշչով սահմանված	հատ	5926	800	4740800	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 80 Կազմի գույները՝ 4+1 Կազմի թուղթը՝կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
2	22111110-23	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը 2»՝ 2-րդ մաս, 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 2-րդ դասարնի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Բնությունն իմ շուրջ» (Երկրագնդի մյուս բնակիչները, փոփոխությունները բնության մեջ), «Առողջություն և անվտանգություն» թեմաները: Թեմաները պետք է միտված լինեն. աշակերտի մեջ ձևավորելու պատկերացումը բնության, կենդանական աշխարհի, բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, դրանցում մարդու դրական և բացասական դերի, մարդու կյանքում բնության, բույսերի ու կենդանիների դերի ու նշանակության մասին ամփոփ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների փոխանցմանը, դրանց հանդեպ պատասխանատվության և խնայող վերաբերմունքի ձևավորմանը,ինչպես նաև՝ դպրոցում և տանը անվտանգության կանոնների, առողջ սննդի, սննդամթերքի ոչ ճիշտ օգտագործման վտանգների և դրանցից խուսափելու միջոցների իմացությանը, սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, մարմնամարզությամբ զբաղվելու կարևորությունը գիտակցելուն, վնասակար սովորություններից, վարակներից խուսափելու հարցում մաքրակենցաղ ապրելակերպի դերը գիտակցելուն և պատասխանատու վարքագծի ձևավորմանը: Դասընթացի	հատ	5926	900	5333400	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 88 Կազմի գույները՝ 4+1 Կազմի թուղթը՝կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
3	22111110-52	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 1-ին մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը 4»՝ 1-ին մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 4-րդ դասարնի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների,հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Բնություն», «Մարմիններ, նյութեր, մասնիկներ», «Բնությունը և մարդը» թեմաները: Թեմաները նպատակ ունեն. աշակերտներին Երկիր մոլորակի, նրա բազմազանության, մակերևույթի՝ հարթավայրերի, լեռների, գետերի, լճերի, օվկիանոսների մասին տարրական գիտելիքներ տալու, բնության երևույթների, հողի, ջրի, օգտակար հանածոների վերաբերյալ հետաքրքրաշարժ և կարևոր տեղեկություններ տալու, որոնք կօգնեն երեխաներին ամբողջական և փախկապված պատկերացումներ ունենալու իրենց շրջապատող աշխարհի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորելու պատասխանատու և խնայող վերաբերմունք մեր ընդհանուր տան՝ Երկիր մոլորակի և նրա բազմազան բնության ու պաշարների հանդեպ: ընդլայնելու երեխայի պատկերացումները շրջակա աշխարհի, նյութերի, մարմինների և մասնիկների մասին, դրանց բազմազանության և հատկությունների վերաբերյալ, պարզագույն փորձերի և դիտարկումների միջոցով	հատ	6153	800	4922400	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				հետազոտություններ և բացահայտումներ անելու կարողությունների խթանման, երեխաների մեջ ձևավորելու մարդու և բնության փոխկախվածության, նրանց փոխազդեցության օրինաչափությունների ըմբռնում, մարդու՝ շրջակա աշխարհը վերափոխելու պատճառների ու դրանց դրական և բացասական հետևանքների, տնտեսության գլխավոր ճյուղերի՝ օգտակար հանածոների, արդյունաբերության և գյուղատնտեսության կարևորության ընկալում, բնության վատթարացման պատճառների ու դրանք նվազեցնելու կարևորության գիտակցում: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 88 Կազմի գույները՝ 4+1 Կազմի թուղթը՝կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսին					
4	22111110-54	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը 4»՝ 2-րդ մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 4-րդ դասարնի աշակերտների համար:Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Ճանապարհուդություններ և աշխարհագրական հայտնագործություններ», «Մեր հայրենիքը», «Ես և հասարակությունը» թեմաները: Թեմաները նպատակ ունեն. աշակերտներին ծանոթացնելու երկրագնդի հետազոտման հին և նոր մեթոդների, վաղ անցյալի ճանապարհորդությունների, հետաքրքիր	հատ	6153	900	5537700	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				փաստերի մասին տեղեկություններ փոխանցելու, հետաքրքրություն ձևավորելու, տեղանքի հետազոտման և տեղանքում կողմնորոշվելու վերաբերյալ գլտելիքներ տալու, հորիզոնի, կողմնացուցի, քարտեզագրման վերաբերյալ տարրական պատկերացումներ ձևավորելու, երեխաների մեջ իրավունքի, պարտականությունների, ժողովրդավար հասարակության, ընկալումների բազմազանության, հանդուրժողականության, իրավահավասարության, կարծրատիպերի մասին տարրական պատկերացումներ փոխանցելու, միջմշակության հաղորդակցության և փոխըմբռնման անհրաժեշտության, տարբերությունները հարգելու և ընդունելու կարևորության գիտակցում ձևավորելու: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գի-տելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 88 Կազմի գույները՝ 4+1 Կազմի թուղթը՝կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
5	22111110-32	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 3» 1-ին մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ֆիզիկական կուլտուրա 3»՝ 1-ին մաս, 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Վ.Առաքելյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքի նպատակն է՝ ապահովել չափորոշչի պահանջներին համապատասխան ֆիզիկական կրթություն: Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագիրը՝ դասագրքում պետք է ներառվեն գիտելիքների հիմունքներ առողջ ապրելակերպից, ֆիզիկական կուլտուրայի և օլիմպիական խաղերի պատմությունից, ինչպես նաև բազմազան և բազմաբնույթ մարմնամարզական և աթլետիկական վարժություններ կատարելու կարողություններ: Անհրաժեշտություն է «Առողջ ապրելակերպ» բաժինը, որը երեխաներին կսովորեցնի հոգ տանել սեփական առողջության պահպանման, ամրապնդման մասին, հետևել օրվա ռեժիմին, կոփել մարմինը, ձևավորել ճիշտ կեցվածք. խնամել աչքերը,	հատ	34958	780	27267240	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				կատարել շարժողական ռեժիմում նախատեսված՝ առավոտյան մարմնամարզական, ֆիզկուլտդադարի, տնային հանձնարարականներ և այլ վարժություններ, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել սրտանոթային, շնչառական համակարգերի վրա ֆիզիկական վարժությունների ներգործման վերաբերյալ:Երեխաների ֆիզ. դաստիարակության վերաբերյալ կարևոր գիտելիքներ և գործնական պարապմունքներ ներառված լինեն մարմնամարզության և աթլետիկական վարժությունների բաժիններում, որոնք կնպաստեն ձևավորել տարաբնույթ ակրոբատիկական, ընդհանուր զարգացնող, շարային, մագլցման, վազքային, ցատկային, հարթաթաթության կանխարգելման վարժությունների կատարման հմտություններ: Դասագրքի կիրառումը թույլ կտա դպրոցականների մոտ ձևավորել այնպիսի արժեքային համակարգ, ինչպիսիք են՝ սեփական մարմինը խնամելու և առողջությանը հետևելու կարողություն, ճիշտ կեցվածքի ձևավորման և հարթաթաթության կանխարգելման վարժությունների կատարման գիտակցում, ֆիզիկական վարժություններով մշտապես ինքնուրույն զբաղվելու կարողություններ, հմտություններ, ինչպես նաև առօրյայում մշտապես կատարել առավոտյան մարմնամարզություն, ֆիզկուլտդադար և այլն: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 64 Կազմի գույները՝ 4+1 Կազմի թուղթը՝կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
6	22111110-33	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 3» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ֆիզիկական կուլտուրա 3»՝ 2-րդ մաս, 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Վ.Առաքելյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտների համար և պետք է լինի առաջին մասի տրամաբանական շարունակությունը: Հինք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչը, ծրագիրը և առարկայի դասագրքի առաջին մասում զետեղված նյութերը՝ դասագրքի 2-րդ մասի բովանդակության մեջ հարկավոր է ընդգրկել՝ «Շարժախաղեր», «Ֆուտբոլ», «Շարժողական ընդունակություններ», «Լող» «Դահուկասահք» բաժինները: «Շարժախաղեր» և «Ֆուտբոլ» բաժինները պետք է նպաստեն ոչ միայն նոր շարժողական կարողությունների, հմտությունների ձևավորմանը, շարժողական ընդունակությունների՝ մշակմանը, այլև անձնային կարևոր հատկությունների՝ ընկերասիրության,	հատ	34958	800	27966400	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Չափաբաժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ*	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 1-ին մաս	1856	304	393	380	600	710	747	0	529	50	239	118	5926
2	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 2-րդ մաս	1856	304	393	380	600	710	747	0	529	50	239	118	5926
3	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 1-ին մաս	1749	403	719	370	556	612	641	0	617	100	254	132	6153
4	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 2-րդ մաս	1749	403	719	370	556	612	641	0	617	100	254	132	6153
5	Դասագիրք«Ֆիզիկական կուլտուրա 3»,1-ին մաս	9707	1573	3263	3000	1500	3426	2873	3511	3604	650	1334	517	34958
6	Դասագիրք«Ֆիզիկական կուլտուրա 3», 2-րդ մաս	9707	1573	3263	3000	1500	3426	2873	3511	3604	650	1334	517	34958
ԸՆԴԱՄԵՆԸ		26624	4560	8750	7500	5312	9496	8522	7022	9500	1600	3654	1534	94074

*** ՀՀ ԿԳՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Չունգուրյան

Հավելված N 2
«10» 06 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում .												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 20-ը/	Ընդամենը
1	22111110-21	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 1-ին մաս						2750000	4740800	4740800	4740800	4740800	4740800	4740800	4740800
2	22111110-23	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 2-րդ մաս	-	-	-	-	-	3093000	5333400	5333400	5333400	5333400	5333400	5333400	5333400
3	22111110-52	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 1-ին մաս	-	-	-	-	-	2855000	4922400	4922400	4922400	4922400	4922400	4922400	4922400

4	22111110-54	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 4» 2-րդ մաս	-	-	-	-	-	3212000	5537700	5537700	5537700	5537700	5537700	5537700	5537700
5	22111110-32	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 3» 1-ին մաս	-	-	-	-	-	15815000	27267240	27267240	27267240	27267240	27267240	27267240	27267240
6	22111110-33	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 3» 2-րդ մաս	-	-	-	-	-	16220000	27966400	27966400	27966400	27966400	27966400	27966400	27966400
ԸՆԴԱՄԵՆԸ								**43945000**	**75767940**	**75767940**	**75767940**	**75767940**	**75767940**	**75767940**	**75767940**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Զունգուրյան